

1923ին: Վարած է նաև քարոզչական և ժողովական պաշտօններ:

ԳԱՅՐԻԷԼ ԵՊՍ. ՄԱՐԱՆՅԻ, Մբ.—Զո. 1822ին Առ. Եգիպտոսի (1843-1867). Գարրիէլ եպս. Միաբանութեան կողմէն կարգուած էր իբր տեսուչ Եգիպտոսի, բայց տեղի ունեցած խնդիրներուն հետեանքով, 1843էն սկսեալ, անկախաբար կը վարէ պաշտօնը, 1 սէֆէր 1268 թուական Պէրաթի մը համաձայն. 1839ին կը ձեռնադրուի Սոսյ մէջ եպս. 1853ին Սպտիներու պատրարքական ընտրութեան ասթիւ տեղւոյն եպիսկոպոսներու անհամաձայնութեան պատճառաւ պետական որոշումով յանձն կ'առնու հաշտարարի դեր կատարել, ինչպէս կը հոսկցուի Յովհաննէս պարք.ի գրած 1853 թուական համակէն: Գարրիէլ եպս. հիւանդութիւնը դարմանելու համար կը ճամբորդէ Իտալիա և կը վերադառնայ 1859ին. կը վախճանի 1867ին, և կը թաղուի Գահիրէի իւրակիրտ Ս. Աստուածածին եկեղեցիին գաւիթը. իր գերեզմանին վրայ շինուած է մարմարեայ գեղեցիկ շիրիմ մը: Հետեւեալն է իր տապանագիրը.

«Դուք էք լոյս . . .

Գերբզգուն հովիւ հօտին Քրիստոսի  
Արքեպիսկոպոս Հայկազնեան տոճի  
Բարեխնամ տեսուչ հոգեոց ամենի  
Բարունի ընտիր պատուոյ արժանի  
Ի Մարաշ ծնեալ բնիկ հայրենեօք  
էր ծաղկեցուցիչ տեղւոյս սաճարօք,  
Լի ես դու ուրեմն տապան գեղապանծ  
Բարեօք՝ որ կրես զայս պատուական գանձ  
յամի Տեառն 1867 ապրիլ 22»:

Ի հիմանէ կառուցած է Ս. Աստուածածին եկեղեցին Գահիրէի մէջ, 1839ին. հոս կը գնենք յիշատակարանը՝ որ գետեղուած է եկեղեցիին ճակատը.

«Կարողութեամբ Այ. կառուցաւ սր. տաճարս  
Նորասանձան յանուն սրչոյ. Աճա.  
Ծնի, արգեամբ լուսաւորչողաւան առ հոկ.  
Ազգիս Հայոց որ յեգիպտոս աշխատասիրութեամբ  
Մըշցի. Գարրիէլի Արքն. արճի եպիսկոպոսի